# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 332 - Ա** **12 մայիսի 2016 թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ N 2 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման կարգի>> 9-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջները

***որոշում եմ՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցույթային հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 12-ի N 2 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:
2. <<Գավառտրանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հատկացնել Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք - Գավառ N1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը 3 տարի ժամկետով:
3. Դադարեցնել <<Գավառտրանս>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հատկացված Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N4 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկումը:
4. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Կարեն Հակոբյանին:
5. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2. <<Գավառտրանս>> ՍՊ ընկերության տնօրենի 2016 թվականի մայիսի 3-ի գրության համաձայն ընկերությունը հրաժարվում է Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N 4 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքից: Առաջարկեց՝ հիմք ընդունելով << կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 58-րդ կետի պահանջները դադարեցնել Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N 4 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը.

3. Հայտարարված թվով 16 ներմարզային՝ Գավառ(Ա/Կ) – Նորատուս - Գավառ N 5, Գավառ(Ա/Կ) – Ծաղկաշեն - Գավառ N 7, Գավառ(Ա/Կ) – Մարտունի(Ա/Կ) - Գավառ N 10, Գավառ(Ա/Կ) – Լճափ - Գավառ N 11, Գավառ(Ա/Կ) – Ծովազարդ - Գավառ N 12, Մարտունի(Ա/Կ) - Լիճք – Մարտունի N 28, Վարդենիս(Ա/Կ) - Սոթք – Վարդենիս N 37, Սևան(Ա/Կ) – ԳԴ< – Սևան N 39, Ճամբարակ(Ա/Կ) - Անտառամեջ – Ճամբարակ N 44, Ճամբարակ(Ա/Կ) - Դրախտիկ - Ջիլ – Ճամբարակ N 45, Ճամբարակ(Ա/Կ) – Վահան – Ճամբարակ N 46 ավտոբուսային և Գավառ(Ա/Կ) – Կարմիրգյուղ - Գավառ N 2, Մարտունի(Ա/Կ) – Վարդենիս(Ա/Կ) – Մարտունի N 32, Վարդենիս(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) – Վարդենիս N42, Ճամբարակ(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) – Ճամբարակ N 43, Մարտունի(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) - Մարտունի N 49 միկրոավտոբուսային երթուղիների մրցույթների համար հայտեր չեն ներկայացվել: Առաջարկեց՝ հիմք ընդունելով << կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 60-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները ներմարզային Գավառ(Ա/Կ) – Նորատուս - Գավառ N 5, Գավառ(Ա/Կ) – Ծաղկաշեն - Գավառ N 7, Գավառ(Ա/Կ) – Մարտունի(Ա/Կ) - Գավառ N 10, Գավառ(Ա/Կ) – Լճափ - Գավառ N 11, Գավառ(Ա/Կ) – Ծովազարդ - Գավառ N 12, Մարտունի(Ա/Կ) - Լիճք – Մարտունի N 28, Վարդենիս(Ա/Կ) - Սոթք – Վարդենիս N 37, Սևան(Ա/Կ) – ԳԴ< – Սևան N 39, Ճամբարակ(Ա/Կ) - Անտառամեջ – Ճամբարակ N 44, Ճամբարակ(Ա/Կ) - Դրախտիկ - Ջիլ – Ճամբարակ N 45, Ճամբարակ(Ա/Կ) – Վահան – Ճամբարակ N 46 ավտոբուսային և Գավառ(Ա/Կ) – Կարմիրգյուղ - Գավառ N 2, Մարտունի(Ա/Կ) – Վարդենիս(Ա/Կ) – Մարտունի N 32, Վարդենիս(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) – Վարդենիս N42, Ճամբարակ(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) – Ճամբարակ N 43, Մարտունի(Ա/Կ) – Գավառ(Ա/Կ) - Մարտունի N 49 միկրոավտոբուսային երթուղիների մրցույթները հայտարարել չկայացած:

**Հանձնաժողովը որոշեց՝**

1. <<Գավառտրանս>> ՍՊ ընկերությանը 3 տարի ժամկետով հաղթող ճանաչել Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N 1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքի հատկացման մրցույթին ներքոհիշյալ տրանսպորտային միջոցներով՝ առաջարկված 180 /մեկ հարյուր ութանասուն/ << դրամ (միջանկյալ կանգառներ՝ Գավառ-Լանջաղբյուր 160 /մեկ հարյուր վաթսուն/ << դրամ, Գավառ-Սարուխան 150 /մեկ հարյուր հիսուն/ << դրամ, Գավառ-Գանձակ 120 /մեկ հարյուր քսան/ << դրամ) փոխադրավարձով.

| № | Տրանսպորտային միջոցի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **մակնիշը** | **հ/հ** | **դ/հ** | **թ/փ** | **վարորդի անունը, ազգանունը** |
| 1 | ԳԱԶ-322132 | 4060C61 | - | 2006 | Գասպարյան Դավիթ |
| 2 | ԳԱԶ-322132 | 4070C61 | - | 2009 | Հակոբյան Հովիկ |
| 3 | ԳԱԶ-322132 | 4990Z61 | - | 2007 | Իսրայելյան Վոլոդիա |
| 4 | ԳԱԶ-322132 | 4050C61 | - | 2009 | Մադոյան Գևորգ |
| 5 | ԳԱԶ-322132 | 34FS083 | - | 2007 | Բախտիկյան Օնիկ |
| 6 | ԳԱԶ-322132 | 72RU777 | - | 2006 | Հովակիմյան Արտակ |
| 7 | ԳԱԶ-322132 | 34LQ225 | - | 2007 | Վարդանյան Յուրիկ |
| 8 | ԳԱԶ-32213 | 34TT507 | - | 2010 | Սարիբեկյան Էդիկ |

Հավելված

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016 թ. մայիսի 12 -ի

N 332-Ա որոշման

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ներմարզային երթուղիների հատկացման մարզային մրցութային հանձնաժողովի**

12 մայիսի 2016թ. ք. Գավառ

2016 թվականի մայիսի 12-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի մարզային մրցույթային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի

| | |
|---|---|
| նախագահ՝ | Կ. Հակոբյան |
| քարտուղար՝ | Գ. Խաչատրյան |
| անդամներ՝ | Գ. Ստեփանյան |
| | Կ. Բաղդասարյան |
| | Գ. Գրիգորյան |
| | Մ. Ղազարյան |

**Օրակարգում**

1. 2016 թվականի մայիսի 10-ին կայացած ներմարզային երթուղու մրցույթի ամփոփման հարցը:
2. Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N4 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկումը դադարեցնելու մասին:
3. Թափուր մնացած երթուղիների մասին:

**Լսույթ ունեցավ՝**

1. Հանձնաժողովի քարտուղար Գ.Խաչատրյանը և նշեց, որ՝ ամփոփելով մրցութային հանձնաժողովի անդամների՝ <<Գավառտրանս>> ՍՊ ընկերության կողմից ներկայացված տրանսպորտային միջոցների գնահատման արդյունքները՝ Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N 1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքի հատկացման համար ներկայացված ութ միկրոավտոբուսները ստանալով 60 միավորից բարձր գնահատական ապահովել են նաև երթուղու հնարավորի (առանց լրացուցիչ միավորների) 70%-ից բարձր միջին գումարային միավոր:

Առաջարկեց՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման 9-րդ կետի 8-րդ ենթակետի, 45-րդ կետի, 54-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները <<Գավառտրանս>> ՍՊ ընկերությանը 3 տարի ժամկետով հաղթող ճանաչել Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N 1 ներմարզային միկրոավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքի հատկացման մրցույթում՝ ներկայացված ութ միկրոավտոբուսներով, բացել ընկերության կողմից երթուղու սպասարկման համար առաջարկված փոխադրավարձի ծրարը և մրցույթի արդյունքները ամփոփելիս հաշվի առնել նրա առաջարկությունը:

2. Դադարեցնել <<Գավառտրանս>> ՍՊ ընկերության կողմից սպասարկվող Գավառ(Ա/Կ) – Գեղարքունիք – Գավառ N 4 ներմարզային ավտոբուսային երթուղու սպասարկման իրավունքը:

3. Ներմարզային Գավառ(Ա/Կ) – Նորատուս - Գավառ N 5, Գավառ(Ա/Կ) – Ծաղկաշեն - Գավառ N 7, Գավառ(Ա/Կ) – Մարտունի(Ա/Կ) - Գավառ N 10, Գավառ(Ա/Կ) – Լճափ - Գավառ N 11, Գավառ(Ա/Կ) – Ծովազարդ - Գավառ N 12, Մարտունի(Ա/Կ) - Լիճք – Մարտունի N 28, Վարդենիս(Ա/Կ) - Սոթք – Վարդենիս N 37, Սևան(Ա/Կ) – ԳՊՀ – Սևան N 39, Ճամբարակ(Ա/Կ) - Անտառամեջ – Ճամբարակ N 44, Ճամբարակ(Ա/Կ) - Դրախտիկ - Ձիլ – Ճամբարակ N 45, Ճամբարակ(Ա/Կ) – Վահան – Ճամբարակ N 46 ավտոբուսային և Գավառ(Ա/Կ) – Կարմիրգյուղ - Գավառ N 2, Մարտունի(Ա/Կ) – Վարդենիս(Ա/Կ) – Մարտունի N 32, Վարդենիս(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) – Վարդենիս N42, Ճամբարակ(Ա/Կ) - Գավառ(Ա/Կ) – Ճամբարակ N 43, Մարտունի(Ա/Կ) – Գավառ(Ա/Կ) - Մարտունի N 49 միկրոավտոբուսային երթուղիների մրցույթները հայտարարել չկայացած:

Հիմք՝ մրցութային հանձնաժողովի 2016 թվականի մայիսի 6-ի N1 արձանագրությունը 3 թերթից, 2016 թվականի մայիսի 10-ի մրցութային թերթիկները 7 թերթից, մրցութային ամփոփիչ թերթիկը 1 թերթից և <<Գավառտրանս>> ՍՊ ընկերության տնօրենի 2016 թվականի մայիսի 3-ի գրությունը:

4. << Գեղարքունիքի մարզպետի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի

նախագահ՝ Կ. Հակոբյան

քարտուղար՝ Գ. Խաչատրյան

անդամներ՝ Գ. Ստեփանյան

Կ. Բաղդասարյան

Գ. Գրիգորյան

Մ. Ղազարյան